



79. ԻՐԻՔՅ ԿԸՆԸԿ

Օրըմ կազու կընըկ, իրիցու կընըկ, ռեսիմ՝ կիլնիմ, կերթան գաշտ, ճամփիսը մեչ մեկ դռ կը կընդմին: Ատ իրիքյ կընըկ հաւտը վար ան դռ քարին կը կըռվին:

Կազու կընըկ կըսը. - Դառաճ ի՛ն տեսա:

Իրիցուն կըսը. - Վուլա՛, ի՛ն տեսա հառաճ:

Ռեսիմ կըսը. - Չը՛, վուլա՛, հառաճ ի՛ն տեսա:

Դառտե շատ կալաբալըխ կանըմ, չըմ բա՛րըշը:

Կազու կընըկ կըսը. - Յանքյ հոքյմաթ, մի շարիաթ անինքյ՝ մըհա մի քա՛վահի քար վի՞ տը խասնը:

Էլան կաջիմ հոքյմաթ՝ կազու խամար, պատմիցիմ ուրիմց պան: Կազիմ ինչըխ արավ-չարավ, չըկարցավ անունց շարիաթ աներ:

Կազիմ կընքյտիրուն էսաց. - Ծի մոհլաթ, քացե՛քյ տուն. ծի իրիքյ կընգանմենե կուզիմ՝ վով գուր իրիկ շատ խապից՝ ան դռ կը տամ անու:

Մեկ օր ռես կընաճ առտ, խիրկ շուռ կը տեր, կընըկ էլա՛վ, կանչից մեկ մարթ իպը, էսաց. - Ա՛ռ քի չարխի՛մ, կընա՛, ծի էրկու ժիր ծուկ պի:

Մարթ կընաճ իպը, կընըկ ամա՛մ ճուր իլից, ըզծուկ էթալ ինը, խաց առիր խա՛տ ան ծըկան, առից, կընաճ առտ, մա ռես:

Առտը քիշըմ կայնավ, ծըկտիր էխան, իտը ուր քերվե, կանչից իրկան, էսաց. - Արը՛ խաց կի:

Մարթ իրը նըստավ, խաց կուտեր, կընըկ կընաց մանչ վարին, կախտիկ ան երկու ծուկ էխան, էթալ մանչ ան չուր խիրկին: Իրիկ չըտեսավ:

Կանչից իրկան, էսաց. - Լա՛գ արը, երկու ծուկ ժիր գո մա նա խիրկին կը փախին:

Իրիկ էսաց. - Կըրո՞ղ տուն, մանչ ամանավան խիրկին ի՞նչ կանը ժիր ծուկ:

Էսաց. - Իլը՛, արը՛, տի՛ս:

Մարթ կընաց, տեսավ՝ երկու ծուկ ժիր գո մանչ խիրկին կըթըխթըփան, սաց. - Կընը՛կ, նա անջեր պան ը:

- Մարթ, ի՞նչկ ը անջեր. շա՛տ կիլընը մանչ խիրկին:

Մարթ շատ մալիանգա արավ, կընըկ էսաց. - Մա՛րթ, ի՞նչ մալիանգա կանիս, տանիմ իփիմ, ուտինք:

Կընըկ իփից, իպը, կերան: Մարթ շըտակ ավանտաց, որ ան ծըկնիր խիրկեն էլան տուս: Էվարին ռես կընաց ժամտան տոռ, կյեղը մարտիր հըմեն բարիավեր են հանդը:

Ռես էսաց մարտիրուն. - Իս հասօր պամըմ տիսիր իմ:

Մարտիր սիցին. - Ի՞նչկ իս տիսիր:

Սաց. - Մանչ ամանավան խիրկին ժիր ծուկ ըմ տիսիր:

Մարտիր սիցին. - Կըրո՞ղ տուն, սուք մը՛ սը, մանչ ամանավան խիրկին ի՞նչ կանը ժիր ծուկ:

Մարթ հերտըվցավ, էսաց. - Պըռնիր իմ, իմ կընըկ իփիր, իս կիրիր իմ:

Մարտիր էլմէլ սիցին. - Վոլա՛, տուս սուք սիցիր:

Անիկ հերտըվցավ, էսաց. - Սուք չը՛, նա ծուկ իս աչկով տեսա, պերնով էլ կերա:

Ինք շըտակ ավանտաց, թը շըտակ ը, ախըր:

Խըլխուսն կընըկ էլավ, կընաց, կազուն կըսա արավ, ընչ որ էլեր էր՝ կազուն էսաց:

Կազին էսաց. - Մըկա տուս ընցկընա քու իրիկ խապիցի՞ր:

Էսաց. - Կյեղ մեն էլ տեսան, իս խապիցը:

Կազին ըզդոռ առից, իտու ռեսը կընգան, էսաց. - Թը անունք թանց քյի շատ խապիցին, ըզդոռ տը տամ անունց, թը չըկարցան խապեն, դոռ տը մնա քյիկ:

Օրըմ էրեց, ուր կընըկ կանցին տանծը ծառտակ:

Իրիցու կընըկ կանխտիկ մարթըմ տեսավ, մարտուն էսաց. - Պախկվը՝ նա փլան տակ, ընչ տերտեր կիլըն ծառվե, տաւ ա՛րը մա՛ ծի, քաւ պան տի՛ս, ընչ էրեց կը կա տակ, տաւ պախկվը:

Կընըկ իրիցուն էսաց. - Տերտե՛ր, տանձ խասիր, տաւ ի՛նը ծառվը, բըռըմ պի՛ ուտինք:

Էրեց էլանվ ծառվե, մարթըն իրը մա՛տ կընըկ, ուր պան տե- սավ, էրեց վիրուց իրիշկից, էսաց. - Կընը՛կ, անամո՛թ, ա՛տ ի՞նչ կանխ:

Էսաց. - Տերտե՛ր, պան չըմ անը:

Էսաց. - Ապա ա՛տ վո՞վն ը հա՛տը:

Էսաց. - Տերտե՛ր, մարթ չըկա ստա՛, իս մընակ իմ:

Տերտեր վիրուց լազ իրը տակ, ա՛ն մարթ փախավ, պախկ- վավ:

Տերտեր էսաց կընգան. - Տաւ վըրե՞ ընցկնա արիր:

Կընըկ հերտըվցավ, էսաց. - Տերտե՛ր, որ մարթ իլըն ծառվե, իրիշկը ծառ տակ, մարտու աչիչ էրկու կը տա:

Տերտեր էսաց. - Կընը՛կ, չէ՛, իս իմ աչկով տեսա:

Էսաց. - Տերտե՛ր, տաւ կա՛ց ստա՛, դորիս իս իլնիմ ծառվե:

Կընըկ էլանվ ծառվե, իրիշկից կյետին, էսաց. - Տերտե՛ր, ա՛տ ամոթ չը՞ քի, ա՛տ ի՞նչ կընըկ ը հա՛տը:

Էսաց. - Կընը՛կ, մա՛րթ չըկա ստա՛:

Էսաց. - Կյըրո՛ղ քի տանը, չէ՞ տաւ քահանա իս, ամոթ չը՞ ա՛տա պան կանխ:

Կընըկ էճանվ տակ, էսաց. - Վա՛յ, տերտե՛ր, տաւ նա պան արի՞ր իս. իս իկը տակ, մարթ չըկա ստա՛:

Էսաց. - Վըրե՞, կընըկըմ խա՛տ իմ կըշտի՞ն էր:

Էսաց. - Տերտե՛ր, ապա տաւ վըրե՞ զի լոմա կաներ, չէ՞ ծառե ծառտակ էրկու կերեվա:

Տերտեր էսաց. - Մոլով մըհա՛ իս տիր՛մ էլ իլնիմ, իրիշկիմ:

Տերտեր որ էլանվ ծառվե, կընըկ ծեռնով արավ, կանչից ա՛տ մարթուն, էսաց՝ արը՛, մարթն իրը, էլմէլ ուր պան տեսավ, տերտեր էլմէլ հիշունց իտու, իրը տակ: Չուր տերտեր իրը, մարթ փախավ:

Էրեց խա՛ կընգան կռիվ արավ, կընըկ էսաց. - Տերտե՛ր, ծուռ մ՛իլըն, բակըլ մ՛իլըն, ծառեն ծառտակ մարտու աչիչ էրկու կերեվա:

Տերտեր էսաց. - Կընը՛կ, իս նա պան չըր կյը՛տե:

Կընըկ էսաց. - Ապա, խորոտ պան սովոր՝

Տերտեր խորոտ անվատաց, թը ան պան շըտակ էր:

Տերտեր իրը կյեղ, մենանց էսաց. - Իս նուր կյըտցա, թը ծառեն ծառտակ երկու կերեվա:

Մարտիր չավատացին, սիցին. - Տերտեր, անա պան սուք ը:

էսաց. - Չը, հասօր իս իմ աչկով իմ կընգան վերա տեսա:

Հըմեն, ինչըխ էլեր էր, հըմեն կըսա արավ:

Մարթիր վերեն շատ ծըծղացին, սիցին. - Տերտեր, անա պան էլ տիր'մ էլ չըսի'ս, ամոթ ը:

էսաց. - Իս կյիտի'մ, շըտակ ը:

Խըլխուս կընըկ էլավ, կընաց մա կազին, ինչըխ էլեր էր, կազու խանար կըսա արավ, կազին էսաց. - Շըտակ կըսիս:

էսաց. - Կյեղական գի մեն կյիտին:

Կազին էսաց. - Կանցե'ք ան դոռ ռեսը կընգանմենե առե'ք, տըվե'ք իրիցու կընգան. իրիցու կընըկ քանց ռեսին շատ խապից:

Օրըմ կազին կընաց շուկեն, կա'զըմ կընից իպը, կընգան էսաց. - Կընըկ, հիրիկուն ի'փը, ուտինք:

Հիրիկուն կընըկ ճրաք արավ, անգիւթ շինից, ըզկազ իտը մանչ պըղընծին, իտը վար անգթան, ինքն էլ թաթ պըղնից ուր ծեռ, նըխշ կաներ: Կազին թեկներ էր վար ուր պանցին:

էսաց. - Կընըկ, անա կազ չեփա'վ, ուտինք:

Կընըկ էսաց. - Մըկա մուր'վ, տակ չի'փիր:

Կազին բոմ մընաց, քընավ: Կընըկ էլավ, ըզպըղինծ անգթից վիրուց, իտը հականաթ պախից, զուր թաթն էլ իտը վերա պախից, էլավ քընու ուլնիկ էթալ կազու ականջ, կազին խորանթ քընավ: Կազու կընըկ էլավ, ծեռ իտու վար ռաֆկին, գարծըլին իպը, ըզկազու մուրուս հըմեն կընդից, ըզկազին շըկից, իպը, էթալ տիւս, ըզտիռ շինից, իրը, նըստավ վար ուր տեղաց:

Մընաց, չուր կեսքըշրին կազին անանխավ, աչկիր էպանց՝ աստղիր կերեվա, էսաց. - Յա, իս տուն էր, մըկա գի իս տի'սն իմ:

Իրիշկից խալավքիրու կես խանուկ ը, էսաց. - Տ'իլնիմ, լազիմ, յամ տուն՝ քանը մարթ ըզի չը տը'սիր:

Կընաց վար տըռան, ծեռ իտու տիռ, տիռ շինուկ էր:

Կանչից, էսաց. - Կընըկ, տիռ պա'ց:

Կընըկ էսաց. - Ան վո'վն ը:

էսաց. - Կընըկ, չե' իս կազին ըմ:

Էսաց. - Դե՛, կյընա՛, կյըրող քյը տամը, իմ կազին գի ստա՛. իս չըմ կյըտը տալ վոլմ իս:

Էսաց. - Կընը՛կ, չէ՞ իս քալ կազին իմ:

Էսաց. - Կը յաս դեն, չըխտ կը կանչիմ մեր կյեղանկան, հըմըն կը յան, ըզքյի ճազիլ անիմ:

Կազին Էսաց. - Կընը՛կ, խանլեմ իս քալ կազին չի՞մ:

Էսաց. - Չէ՛, իս քյի չըմ ճանչընա:

Կազին մանլիանգա արավ, ծեռ իտու մուրուս, մուրուս չըկա, Էսաց. - Յա՛, կիլըն, իս կազը չի՞մ:

Շատ մանլիանգա արավ, Էսաց. - Կիլըն, նա մի տառ չը...

Կայնավ մանչ փուլնին, իրիշկից դես-դեն, Էսաց. - Ջանըմ, վոլա՛, նա տուն միրն ը:

Տիր՛մ էլ ըզծեռ իտու ըզտառ, կանչից, Էսաց. - Կընը՛կ, տառ պա՛ց:

Էսաց. - Տը յաս դեն, չըխտ կը կանչիմ գափթիյեքյ, կան ըզքյի տանին հոքյմաթ: Մըհա քալ պան ի՞նչկ ը, կյիշիրով տալ կան վար մի տըռա՞ն:

Կազին տիր՛մ էլ մանլիանգա արավ, Էսաց. - Ջանըմ, իս կազը էր, մուրուսով, մըկա նա գի մուրուս չըկա, նա աջեք պան ը, կիլըն, թը իս կազին չիմ: Տ՛իլնիմ, նա կյեղեն էրթամ, քանը չըլիւսցիր: Կյեղանկան կան գի տիսնին անմուրուս, ծի ամոթ ը:

Կազին իթուղ, կյընանց դույնեն վե: Կյընաց Ձըզիրեն:

Մընաց չուր տարըմ, մուրուս իրը, խորոթ թումումավ, Էսաց. - Վոլա՛, իս տ՛իլնիմ, էրթամ. էրթամ մի կյեղ:

Էլանվ, իրը ուրինց կյեղը մոտխաս կյեղըմ, կընըկ լըսավ, թը կազին իկիր ան կյեղ: Կընըկ էլանվ, կյընանց ուր պարեկմը տուն: Ան պարեկմը անուն էլ Դանման էր:

Էսաց. - Դանման, իս խարիր կուրուշ տամ քյիկ. ընչ կազին կը կա, էվարին տալ տանիս ծի տուն, չըթըղնիս կա մի տուն: Իս էլ հիրիկուն կը կան ծի տուն:

Կազին էվարին իրը, Դանման կյընանց հիրծիվ, Էսաց. - Յա՛, կազը՛, տալ պարո՛վ իկիր, տալ հասօր ծի մեհվան իս:

Էսաց. - Ձի մընանթ ը:

Էսաց. - Բըվենա՛վե, տը կան մի տուն:

Առից, տարավ ուրինց տուն: Շրաքյ կըպուց, ընթրիս կերան, մողդարըմ նըստան, կազին նեղանցեր էր, պառկավ, քընավ:

Կազու կընըկ համա իրը, քընու ունիկ էթալ կազու ականջ, կանչից, մարթըմ իպը հանդե, էսաց. - Մա'րթ, ա'ռ քյի չարխի'մ, ըզկազին շը'կը, տա'ր մի տոււն:

Ինչըխ հանաչ, ուր տեղ շինից, կազին ընցկուն իտը վար ուր տեղաց: Տալ ան պըղինծ, կազ հինը, գի հանանատ, իպը, իտը վար անգթին, էլալ ուր թաթն էլ իպը, նըստալ հիրճիվ ճրաքյին, էլմէլ ան ավուր պես նըխշ կանը: Էլալ կազու ականջեն ունիք էխան: Կազին անախալ, կիրիշկը՝ գի ուր տոււն ը:

Էլալ նըստալ համա, կիրիշկը՝ կընըկ թաթ կանը, էսաց. - Կընը'կ, հա'յ քիւ խեր անիծած, տու մա ի'նչ էր՝ արիր խա՛ ծի:

Էսաց. - Կըրոր'դ տոււն, ի'նչ ըմ արիր:

Էսաց. - Տիւ վը'րը իմ մուրուս կընդիցիր, ըզի իցկիցիր դույնենվե:

Կազին ըզծեռ իտու փետ, էլալ թախ կընըկ:

Կընըկ էսաց. - Տընավի'ր, տիւ ծըռա'ր, մա ի'նչ էլալ քյի:

Էսաց. - Կընը'կ, ապա մա պաներ'ը ընչ տու արիր խա՛ ծի:

Էսաց. - Կազը՝ մըհա կըսա՝ արա, մըհա ի'նչ իլիր խա՛ քյի:

Ինչ որ էլեր էր, կազին կընգան խամար կըսա արալ:

Կընըկ էսաց. - Յա'խ, կըրոր'դ տոււն, ան տու էրազ իս տիսիր:

Կազին էսաց. - Կընը'կ, իս մա տարի'մ կա դույնեն կան կը կան, տու ի'նչըխ կըսիս՝ մա էրազ ը:

Էսաց. - Տընավիր, կազու էրազ շատ խորա'նթ ը: Տիւ կը խի'ս՝ տալ գի կազ վար անգթան, տալ մի կազ չիփի'ր, տալ իս իմ թաթը նըխշ չըմ պը'ռծիր: Տիւ քընար, իս սիցը՝ չուր կազ իփը, ըզկազին խանիմ վե: Մըկա տու քընուց անախար, ծըռիր իս:

Կազին կիրիշկը կընգան խաբարն ը՝ կազ գի վար անգթան, թաթն էլ գի մա կընգան ծեռ, ինքյն էլ գի էլմէլ անցկուն թեկնիր վար ու պանցին:

Կազին շաշ էլալ, էսաց. - Կընը'կ, կիւնը մա էրա'զ էր:

Էսաց. - Կըրոր'դ տոււն, չէ՛ չըխտ էրազ ը. ապա տու հի'փ կանցիր կարիքութին, տու կըսեր՝ ծի մուրուս չըկեր, գի տու մուրուսով, գի խատ իմ կըշտին իս:

Կազին անատաց, թե էրազ տեսեր էր:

Մընաց, խըլխոււն կազին էլալ տուս, անու տըրկըցտիր, վով տեսալ, էսաց. - Վու', կազը՝ տու պարո'վ իս իկիր:

Էսաց. - Վըրե իս կանցեր դո՞ւր:

Սիցիմ. - Նա տարե՛մ կա, տաւ չըս է՛րեմա:

Կազին Էսաց. - Իս հիրիկուն կանցիր իմ տուն, մըհա խըլի-սուն իկիր իմ տաւս, մըկա տաւք ձի ընցկընա կըսիք: Իս թո՛ւ տեղ չըմ կանցիր:

Սնունք սիցիմ. - Կազը՛, տաւ սուք կըսիս:

Կազին հերտըվցավ, Էսաց. - Տաւ ի՞նչ լըսեր եք սուքը:

Կազին կըթցավ, թը նա պան էրազ էր:

Կազու կընըկ կընանց հոքյմաթ՝ կազու խամար ինչըիս էլեր էր, կըսա արավ, կազին շաշ էլամ, Էսաց. - Կընը՛կ, քաւ սըհաթ խո՛շ, որ տաւ քաւ իրիկ ընցկընա խապիցիր: Տաւ շատ ջամբազ իս: Խա-լեմ ա՛ն դոռ կը խասնը քիկ:

Իրիցու կընգանմենե առին, տըվին կազու կընգան:

Ընցկընա պան կիլնը մի երկիր:

